

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԴԱՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼ.ՌԻԽ Զ.

Դաստիարակութեան այլ և այլ միջոցներուն ու բարոյական բարեկրութեան իրարու վրայ ազդեցուքիւնը, կրօնքի գերազոյն ու տիրական ազդեցուքիւնը : (Ծես երես 289)

Բայց թէ որ չկայ բան մը՝ որ Կրօնից հաւասար ազդեցութիւն ունենայ Շարեկրթութե և միանգամայն ուսմանց ու մտաց բնական զարգացմանը վրայ, տղուն բնաւորութեանն ու պակասութեանցը և անոր բովանդակ կենացը ապագային վրայ, Կրծիքն ալ մէկալ կողմանէ՝ դաստիարակութե միւս երկու մեծ միջոցներուն գործակցութիւնը պահանջէ :

Եւանց Ուսման ու Բարեկրնութեան՝ Կրօնքը իրեն արժանաւոր մարդիկներ չկազմեր :

Կրօնքը կ'ուզէ որ լուսաւորեալ ըլլայ. Հաստատուն ու անխարդախ բնաւորութիւնները կը սիրէ. բթացեալ մոքեր կամ ցած ու մեղկ բնաւորութիւններ իրեն անարգանք ըլլալէն զատուրիշ բանի չեն գար :

Օ ուր տեղը կը ջանայ անոնց սիրտն ու միտքը կազմելու :

Շարեկրթութիւնը, որ ինչպէս տեսանք՝ առանց Կրօնից նիւթական ու անարգ բան մըն է, մէկալ կողմանէ Կրօնքի անհրաժարելի օգնական մի է :

Ուութեան ու խաղաղութեան ձեռքով՝ մտաց ամփոփմունքը կը պահէ, քրիստոնէական իմաստութեան դասերուն կամ շնորհաց տպաւորութիւններուն ճամբաները կը պատրաստէ :

Եւնել կամ նուածել կամաց մոլորութիւնները, որով կիրքերը կամ հասակին խակութիւնը իր պարտքերէն զինքը կը հեռացընեն. Հպատակեցընել առանց ընկճելու, հրամայել առանց նըւաստացընելու, բարձրացընել ցածցը-

նելու ատեն, սանձելու ժամանակը հաստատել ու առաջ տանիլ. արգիլել որ կարողութիւնները ցրուելով չմոլոր ըին ու չտկարանան. պաշտպանել բարեպաշտութիւնը, ուսմունքներն ու բարի վարքը միանգամայն. ահա այս է գործքը, այս պարտէլ բարեկրնեական Դաստիարակութեան :

Ի՞նչպէս ուրեմն կրնայ Կրծիքը զանց ընել զանիկայ :

Ուսումն ալ իր կողմանէ Կրծիք զօրաւոր կերպով գործակից կ'ըլլայ :

Իւնալ ու զարգացընել տղուն իմացականութիւնը, մտածութիւր արթընցընել, ողջամիտ գաղափարներ տալ իրեն, կազմելու զարգացընել թափանցողութիւնը, ուղիղ միտքը, խելք բանեցընելը. Ճոխացընել իրեն յիշողութիւնը, կազմել անոր բանավարութիւնը, խօսակցութիւնը, երևակայութիւնը բեղնաւորել, Ճաշակը յղկել, դատումը կրթել. այս է ահա իմացական դաստիարակութեան պարտէլ և Ուսման փառքը :

Եւ միթէ դիւրին չէ իմանալը թէ այս բաներէն ողչափ բարիք կ'ելէ Կրօնից :

Ի՞յս կերպով պատրաստուած, մեծցած, զարգացած ու հաստատուած մոքերը՝ աւելի լաւ կ'ըմբռնեն քրիստոնէական բարձր ճշմարտութիւնները :

Երիտասարդ մը որ պատշաճապէս իր միտքը կրթած է, թէ որ ուրիշ կողմանէ ամէն բաները հաւասար ըլլան՝ կ'ունենայ աւելի դիւրազգած սիրտ մը, աւելի մեծանձն ոգի մը, և միանգամայն աւելի վսեմ բանավարութիւն :

Հին մատենագիրները մտադրութիւն կարդալով՝ կը գտնայ գեղեցիկն ու ճըշմարիտը մատենագրական կերպարանացը տակէն. իսկ երբոր անոնք Կրօնքի ձեռքովը իրենց գերազանց պայծառութեամբն որ երևնան իրեն, որչափ աշխուժով զանոնք կ'ընդունի :

Ի հաւասիկ տես՝ թէ ինչպէս որ Բարեկրնեականն և Ուսմունքը կարօտ են Կրծիքն, ասանկ Կրօնքն ալ դաստիարակութեան մեծ վախճանին հասնելու համար անոնց կարօտ է :

|| Երջապէս՝ տղուն զօրութիր պահապանել, իրեն կենացը վրայ հսկել, իրեն բնական կազմուածքը զարգանալու ատեն ուժովցընելու օգնել. այնպէս ընել որ անդամները դիւրաթեք ու զօրաւոր ըլլան, ազնուական ու մաքուր արիւն մը իր երակներուն մէջը ընթանայ. այն երկնային բոցը՝ որ իրեն աչուրներուն մէջ կը ցողանայ, ոչ երբէք նուաղի ու շիջանի. այն սիրելի գոյնը, այն անբացատրելի շնորհքը՝ որ առաքինի տղայոց ձակատը կը պճնէ, այն չեմ գիտեր ինչպիսի երջանկութիւնը՝ որ երկնից պարգևներէն կու գայ, բնաւ չանհետանայ տխուր ամսկերու ներքե. այս է բնական Դաստիարակութիւն պարտքը. և այս պարտքը կատարելու համար հարկաւոր են շատ մտաղիր, շատ զգուշաւոր ու շատ մեծարանօք լի խրնամքներ : — Ի՞այց առանց հարկ ըլլալու որ ապացուցանենք՝ մարդ ինքիրեն չտեմնար թէ ինչ ազդեցութիւն ունին այդ կարեւոր խնամքները դաստիարակութեան վարժոցին մէջ՝ բարեկրթութեան և ուսմանց յառաջազիմութեան կամ ետև մնալուն, և նոյն իսկ բարեպաշտութեան վրայ :

Եւ ով դիւրաւ չըմբռներ ինչ որ լլաւ մունքը, աշխատութիւնը, Իարեկարգութիւնն ու Իարեկրթութիւնը, ևս առաւել լլոնքը կ'ազդեն՝ բարի վարուց վրայ հսկելով առողջութիւնն ու զօրութիւնը հաստատ պահելու : Իսուած է թէ լլոնքը խնկենի մըն է՝ որ թող չտար որ ուսմունքն ապականի : Լլոնք մենք ալ կ'ըսենք. առաքինութիւնը աստուածային բարասան մըն է՝ որ տղուն կեանքն ու կայտառութիւնը կը պահապանէ : Եւ բարոյական ու կրօնական Իարեկրթութիւնն է միայն՝ որ զառաքինութիւնը կը պահպանէ :

Ի՞այս ամէնը լմընցընելու համար քանի մը մանր գիտելիքներ ալ զուրցեմ, որոնք անշուշտ անօգուտ չեն ըլլար ու լցու տան. օրինակի մը համար, վարժարանի մը մէջ դարմանական բնական Դաստիարակութիւնը ամէն կողմ խրնամքով ու անխոնը հսկողութեամբ

Տադրութիւն կը պահէ, զորն որ բարոյականի և քրիստոնէական կենաց ամենայն վարժապետք՝ իրաւամբք և ամենաձմարիտ մտածութեամբ առաքինութիւն անուանեցին . և Տադրութիւնն է որ մարմնոյն զօրութիւն մը կու տայ ու կը պահպանէ և արտաքին վսեմութիւն մը, որն որ նաև հոգւոյն արժանիքն և ուժն ալ կը պահէ :

Ի՞այց սակայն լլոնքը կը հսկէ որ չըլլայ թէ Տադրութիւնը մեղկութեան ու ներեւամբութեան դառնայ, և չափազանցը երթալով առաքինութիւն ըլլալէն դադրի :

‘Լլոնքէս բնական Դաստիարակութիւնը հանգստեան արդար չափ մը կը դնէ էմայական Դաստիարակութիւնը, մտաց պատշաճական սփոփանքը կը շնորհէ, ուսման ժամերուն յամորդել կու տայ հանգստեան ժամերը. բայց մէկալ կողմանէ ալ խոհեմ ու անյողգողդ Բարեկրթութիւնը թող չտար որ հանգստեան չափն անցնի . ոչ դաժանութիւն ունի և ոչ խեղեփցածութի, այլ աշխատութեան ձեռքովը կը պատրաստէ զուարժութիւնը, ու զուարժութեան ձեռքով աշխատութեան յոգնութիւնը կ'անցընէ, և իրեն խոհեմ զեկավարութեամբ բը խաղը պատշաճապէս կը խառնէ ծանր ու մտադրութեան արժանի զբաղանաց հետ :

Եւ վերջապէս տան մը գնդէսական հարակարութիւնը թէ վարժապետաց և թէ աշակերտաց մտաւորական անկախութիւն մը կու տայ, ազնուական պահովութիւն մը, և կենաց նիւթական հոգերուն երջանիկ մոռայութիւն մը՝ որոնցմէ ազատ ըլլալը կ'օգնէ խելքը գլուխը ժողված բարեպաշտութեան և ուսմանց պարապելու :

Ի՞այս վախճանիս համար է որ գեղեցիկ տեղ մը կ'ընտրէ. ընդարձակ տուն մը, ու Իարեկրթութեան պիտոյիցը լաւ յարմարցուցած. սրահները բարձր, ննջարանները մեծ, դասատունները օդբանող, գեղեցիկ մատուռ մը, և լայն ու արձակ պարտէզ : Ինքն է որ ինչ պէս պէտք է նէ վարժապետները կը

կարգադրէ , չե թէ միայն առողջութեան , հասա միանգամայն զրաւորական վայեցութեանն ու արժանեացը յարմար . ինքն է որ ամէն բան կարգի կը գնէ ինչ որ աշակերտացը տարիքին հարկաւոր է , այն մատաղ , եռանդուն ու վառվառն հասակին , որն որ միանգաման այնպէս լաւ ալ ուսման մտադրութիւն կ'ընէ , որ տասը տարի ամբողջ ամէն օր տասուերկու ժամ լրւու ու հանդարտ կ'անցընէ :

Իսյց սակայն Կրծիք , որ ամէն բանի մէջ գերազոյն ողջամտութիւն է , կ'ուզէ որ այս տանը մէջ զեղխութիւն ըլլայ , հասա ազնուական պարզութի մը փայլի . մեծադործ ըլլայ իր բարձրութեամբը , գեղեցիկ կարգաւորութքը , ու բնակող աշակերտաց բազմութեանը համեմատ ընդարձակութեամբը :

Խստութեամբ զուրս կը հալածէ ձոխ կարասիները , մնոտի ունայնասիրութիւնները , աւելորդ զարդարանքները , ու այն ամէն բան՝ որ սնապարծութեան ու զեղխութեան ցոյց մը կու տան . իսկ ոսկիէ ու արծրթէ ամանները , ոսկիթել կերպասները , ազնիւ ու պատուական քարերը , և անուշահոտ բուրմունքները՝ Արքութեան սեղանայն կը պահէ :

Այս մանրամամ հանգամանքներուն վրայ ալ չեմ երկնցըներ . այս լավս բաւական է իմ վախճանիս համար , բայց գնեն ալ հարկաւոր էր : Շատ կարեսը էր քիչ մը պարզաբանել այն ազդեցութիւնն որ գաստիարակութե իրաքանչւր մեծամեծ միջոցները ամբողջ գաստիարակութեան վրան ունին . և անանկով յայտնի ցուցընել թէ ինչ պէս ասոնք ամէնը մէկմէկու հետ միացած մի և նոյն վախճանին պէտք է որ դիմեն , թէ որ կ'ուզենք որ այս վախճանիս կատարելապէս ու լիովին հասնինք . թէ որ կ'ուզենք որ գաստիարակութիւնը ճշմարտապէս կատարուի :

Արդ որովհետեւ ալ ժամանակն է որ մեր խօսքը վերջացընենք . ազդել մա-

տաղ տղայոց հոգիներուն մէջ ծանր ու աշխատասկէր կեանքի մը ախսոքժակը , որ օր մը պտղաբերէ բնաւորութեան ու պարտուց հաւատարմութիւն .

Բարբաքել աշխատութեան սէրը . դպրութեանց , ուսմանց , արուեստից , ձեռագործի , երկրագործութեան ու վաճառականութեան աշալուրջ տիորժակը , զաստիարակութեանը այլեւայլ նպատակին համեմատ . և վառելեռանդ մը ամէն գեղեցիկ ծանօթութեանց ու ազնուական յառաջաղիմութեան , որ շատ դարերէ 'ի վեր մեր հայրենեացը ձիրքերն եղած էն .

Վիրքերը պատշաճ ժամանակին՝ Արշից օգտակար տղղեցութեանը տակ այնպէս նուածել , կանոնաւորելու կարգաւորել , որ մարդ կարող ըլլայ վրանին տիրել , ու բարոյն արգելք մը ըըլլալէն զատ՝ մեծամեծ գործոց ալ օգտակար գործիքներ դառնան .

Այսպէս կազմել զմարդ՝ որ աղէկ վարուիլ գիտնայ , որ է ինքըզինքը նեղել առանց ուրիշն նեղութիւն տալու , ու ոչ այնչափ շացընել զուրիշները վայելուչ կերպերով , որչափ զմայլեցընել պարզութեամբ , և աղղուութիւն ընել մեծարելով .

Ոիով բանիւ , քաղցր ու հաստատուն Բարեկըթութեան առաջնորդութեամբը , միշտ սիրելի ու յարկելի իշխանութեան ազդեցութեամբը՝ հաստատել ու պահպանել զրաւորական , կամ ձեռագիտական , երկրագործութե ու վաճառականութեան վերաբերեալ զրաւոր ու պայծառ կրթութիւններ , միանգաման անարատ վարք , առատամիտ հլութիւն , լուսաւոր հաւատք ու խորին բարեպաշտութիւն մը .

Երջապէս՝ նոյն Ճամբով , վարժապետաց ու աշակերտացը մէջն ալ հաստատել այն քաղցր ու զօրաւոր կապերը՝ որ ոչ երեկը կը քակուին . և անձնանուիրութեան ու երախտագիտութե , սիրոյ ու մեծարանաց այն յիշատակները՝ որ վարժապետաց ամէն բանէ աւելլ անուշ փոխարէնն է , ինչպէս որ աշակերտացը սրտին մէջն ալ այնպիսի եր-

Զանիկ ու անեղծանելի տպաւորութիւն
մըն է՝ որ միշտ անջնջելի կը մնայ .

Այս կերպով՝ զօրաւոր ու պարզ մի-
ջոցներով պատրաստել այդ մատաղ ոգի-
ները յիմացութիւն ճշմարտին , որ նոյն
խոկ Շատուծոյ լոյսն ըսել է . այս մա-
տաղ սրտերը՝ 'ի սէր բարւոյն , որ ճըշ-
մարտին նշյն է . ու բօլոր իրենց կեան-
քը՝ 'ի կրթութիւն բարւոյն . և ասով
այնպէս ընել՝ որ իրենց դաստիարակու-
թեան տպաւորութեանցն ու յիշատակ
ներուն մէջ կարենան գտնել երջանկու-
թիւնը , ճշմարտութիւնն ու առաքի-
նութիւնը , և միանգամայն իրենց բը-
նութեանն ալ բարձրագայն պատիւը .

Երբէն կը դառնամ կ'ըսեմ . այսպիսի
է ահա այն մեծ գործքը . այս է զաս-
տիարակութեան զախճանը . այս
մանկութեան դաստիարակացը բարձր
ու նուիրական պաշտօնը :

Այս է ահա ընդհանրական ու էտիան
դաստիարակութեանը , որուն որ ամէն
մարդ՝ որ աշխարհք կու գայ՝ իրաւունք
ունի :

Այս է գերազանցօրէնխօսելով՝ մարդ-
կային Դաստիարակութիւնը : Դայց
նորէն կ'ազաղակեմ , և յուսամ որ ալ
հիմա շատ աւելի լաւ պիտի հասկրցուի
խօսք՝ թէ Շալորովին ու ամենայն կեր-
պով կրօնական մեծարանաց գործք մըն
է ասիկայ :

Գաղափար արիւնական :

Գաղփացի մը գունդ մը կարիք զօրքե գլուխ
կեցած՝ բազմաթիւ թշնամեաց գէմ պատերազ-
մելու կ'երթար . մէկը մէկալը ըսին իրեն թէ անսնց
գիմացը ելքէն առաջ լատեսներ խաւրէ որ զօրքին
թիւը իմացուի . “ Աղէկ , աղէկ , պատասխանեց
այն քաջը , երթանք ջարդէնք մէյ մը զանոնք ու
ետքը գլուխնին կը համեմէնք , ” :

ԲԱՆԱՍԻՐ ԱԿԱՆՔ

ՊԱՏՄԱԿԵՆ

Գերմանացոց կենցաղն ու բնաւորութիւնը :

(Տես երես 215)

Օգացմանց ու սովորութեց , հան-
ձարի ու ախորժակի մէջ համաձայնու-
թիւն չկայ Դաերմանիա . կրթութիւնն
ու բնութիւնը գեռ իրարու հետ այն-
չափ լաւ միացած չեն երեւար : Կան
խիստ անկեղծ մարդիկներ , որոնց խօս-
քերն ու բռնած դէմքը արուեստակեալ
են , իբրև թէ ծածուկ պահելու բան
մը ունենային մտքերնուն մէջ . երբեմն
ընդ հակառակն կը գտնուին այնպիսի
մարդիկներ ալ , որոնց սիրութէպէտ
քազզը է , բայց կերպերնին բիրտ է .
և գեռ աւելին ալ կայ . շատ անգամ
խիստ խօսակցութեան ու խիստ կեր-
պերու տակ՝ տկար բնաւորութիւն մը
ծածկուած է : Դապրութեանց ու բա-
նաստեղծութեան վրայ եւանդ այնպի-
սի մարդիկներու քով կը գտնուի , որոնք
ընկերական կենաց մէջ ռամիկ սովորու-
թիւններ ունին : Դաերմանիոյ պէս ու-
րիշ աշխարհք մը չկայ , ուր զրական-
ներն ու համալսարաններու մէջ սորվող
երիտասարդները այնչափ լաւ գիտնան
հին լեզուները ու հնութեան վրայ այն-
չափ անեղեկութիւն ունենան . բայց այս
բաները ամենեին չկան այն տեղերը ,
ուր ընդհանրապէս հին սովորութիւն-
ները գեռ կը տեեն : Հունաստանի յի-
շատակները , գեղարուեստից ախորժա-
կը կարծես թէ հաղորդակցութեամբ
հասած են այս աշխարհքս . բայց կա-
լուածական կարգերը , Դաերմանացոց
հին սովորութիւնները միշտ կը մեծա-
րուին , թէպէտ երկրին զինուորական
ուժին դժբաղգութենէն նոյն ազգե-
ցութիւնը չունին :

Շալոր Դաերմանիոյ պատերազմական
երկայթը ու ամէն մէկ քայլի զինուորի